ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԵՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«16» հուլիսի 2020թ.

ՀՀ Լոռու
մարզպետարան
մարզպետ Ա.Ղուկասյանին

N197

Հարգելի պարոն մարզպետ

Կից Ձեզ ենք ներկայացնում Շենավան համայնքի ղեկավարի թիվ 24-Ա որոշումը:

Առդիր1/մեկ/ թերթ:

Համայնքի ղեկավար՝ Ս.Մխիթարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 24-Ա

«16 » հուլիսի 2020թ.

ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի ԹԻՎ 20-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 06-086-0120-0001 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված անճշտությունների ուղղման նպատակով՝ 06-086-0120-0001 ծածկագրի տակ հաշվարկվել է 0,3142 հա հողամաս, սակայն ՀՀ Կառավարության 2005թվականի հունիսի 9-ի թիվ 838-Ն որոշմամբ համայնքին չի հանձնվել, նկատի ունենալով, որ տվյալ հողամասը տնօրինում, տիրապետում և օգտագործում է համայնքը ուստի ղեկավարվելով անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 10.06.2010թվականի, թիվ 186-Ն հրամանագրով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Շենավան համայնքի ավագանու 14.07.2020թվականի <<Շենավան համայնքի վարչական սահմաններում գտվող հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքը ճանաչելու մասին>> թիվ 35-Ա որոշումը.

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանաչել համայնքի սեփականության իրավունքը 06-086-0120-0001 ծածկագրի տակ գտնվող 0.3142 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողամասի նկատմամբ:
2. Սույն որոշման մեջ օրինակը տրամադրել Լոռու կադաստրային մարզային ստորաբաժանում որպես հիմք տվյալ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունք գրանցելու համար:
3.ՈՒԺը կորցրած ճանաչել Շենավան համայնքի ղեկավարի 2020 թվականի հունիսի 23-ի թիվ 20-Ա որոշումը:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Համայնքի ղեկավար՝ Մխիթար Մխիթարյան